

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն Արձանագրությունը մշակվել է «Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 78-րդ հոդվածի համաձայն և ուղղված է սույն Արձանագրության 1-ին հավելվածում նշված ոլորտներում անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և ընդհանուր կանոնների կիրառման համար իրավական հիմքեր ստեղծելուն:

2. Սույն Արձանագրության մեջ օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստը՝

«ներքին շուկա»՝ անդամ պետության շուկա, որում շրջանառվում են բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունները.

«բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիություն»՝ մեկ անդամ պետության բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից բնական մենաշնորհի ոլորտին առնչվող ծառայությունների մատուցում այլ անդամ պետության սպառողների առաջին անդամ պետության սպառողներին տեխնիկական հնարավորության առկայության դեպքում համանման ծառայություն տրամադրելու պայմաններից ոչ պակաս բարենպաստ պայմաններում.

«բնական մենաշնորհ»՝ ծառայությունների շուկայի վիճակ, որի դեպքում ծառայությունների որոշակի տեսակի պահանջարկի բավարարման նպատակով մրցակցային պայմանների ստեղծումն անհնար է կամ տնտեսապես նպատակահարմար չէ արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունների ու ծառայությունների տվյալ տեսակի մատուցման պատճառով.

«անդամ պետության օրենսդրություն»՝ բնական մենաշնորհի ոլորտին առնչվող՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի ազգային օրենսդրությունը.

«անդամ պետությունների ազգային մարմիններ»՝ անդամ պետության մարմիններ, որոնք իրականացնում են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորում և (կամ) հսկողություն.

«ծառայությունների մատուցում»՝ ծառայությունների տրամադրում, քաղաքացիական շրջանառության օբյեկտ հանդիսացող ապրանքների արտադրություն (իրացում).

«սպառող»՝ քաղաքացիական իրավունքի սուբյեկտ (ֆիզիկական կամ իրավաբանական անձ), որն օգտվում է կամ մտադիր է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայություններից.

«բնական մենաշնորհի սուբյեկտ»՝ անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված բնական մենաշնորհի ոլորտներում ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտ.

«բնական մենաշնորհի ոլորտ»՝ օրենսդրությամբ բնական մենաշնորհի հանդիսացող շրջանառության ոլորտ, որտեղ սպառողը կարող է օգտվել բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններից:

II. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընդհանուր սկզբունքները

3. Սույն Արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներում նշված բնական մենաշնորհի ոլորտներում բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեությունը կարգավորելիս և (կամ) հսկելիս անդամ պետություններն առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով՝

1) անդամ պետությունների սպառողների ու բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի հավասարակշռության պահպանում, որն ապահովում է սպառողների համար մատուցվող ծառայությունների հասանելիությունը և դրանց որակի պատշաճ մակարդակը, բնական մենաշնորհի սուբյեկտների արդյունավետ գործունեությունն ու զարգացումը.

2) կարգավորման արդյունավետության բարձրացում՝ ուղղված բնական մենաշնորհի ոլորտների հետագա կրճատմանն այդ ոլորտներում մրցակցության զարգացման պայմանների ստեղծման հաշվին.

3) բնական մենաշնորհի սուբյեկտների ճկուն սակագնային (գնային) կարգավորման կիրառում՝ հաշվի առնելով ճյուղային առանձնահատկությունները, դրանց գործունեության մասշտաբները, շուկայական պայմանները, միջնաժամկետ (երկարաժամկետ) մակրոտնտեսական և ճյուղային կանխատեսումները, ինչպես նաև այդ սուբյեկտների սակագնային (գնային) կարգավորման միջոցները, այդ

թվում՝ այն տարբերակված (դիֆերենցիալ) սակագնի սահմանման հնարավորության կիրառումը, որը, համաձայն ցանկացած անդամ պետության սպառողի (սպառողների խմբի) պատկանելիության սկզբունքի, չի կարող սահմանվել.

4) կարգավորում սահմանելն այն դեպքերում, երբ համապատասխան ներքին շուկայի վերլուծության հիման վրա սահմանվում է, որ այդ շուկայում գործում է մենաշնորհ.

5) ներքին շուկաներ մուտք գործելուն խոչընդոտող գործոնների կրճատում, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիություն ապահովելու միջոցով.

6) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման ընթացակարգերի կիրառում, որոնք ապահովում են ընդունվող որոշումների անկախությունը, անընդհատությունը, հրապարակայնությունը, օբյեկտիվությունն ու թափանցիկությունը.

7) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սպառողների հետ այն ծառայությունների տրամադրման վերաբերյալ պայմանագրերի կնքման պարտադիրություն, որոնց նկատմամբ կիրառվում է կարգավորում անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան սահմանված տեխնիկական հնարավորության առկայության դեպքում, եթե Պայմանագրի XX և XXI բաժինների դրույթներով այլ բան նախատեսված չէ.

8) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության կանոնների պահպանման ապահովում.

9) կարգավորման ուղղվածությունը բնական մենաշնորհի կոնկրետ սուբյեկտին.

10) սահմանվող սակագների (գների) համապատասխանությունը բնական մենաշնորհի այն ոլորտներում մատուցվող ծառայությունների որակին, որոնց նկատմամբ կարգավորում է կիրառվում.

11) սպառողների շահերի պաշտպանություն, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից՝ կարգավորվող ծառայությունների սակագների (գների) կիրառման հետ կապված խախտումներից.

12) այնպիսի տնտեսական պայմանների ստեղծում, որոնց դեպքում բնական մենաշնորհի սուբյեկտների համար շահավետ է կրճատել ծախսերը, ներդնել նոր տեխնոլոգիաներ, բարձրացնել ներդրումների օգտագործման արդյունավետությունը:

III. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման տեսակներն ու մեթոդները

4. Անդամ պետությունները կիրառում են անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման տեսակները (ձևերը, միջոցները, մեթոդները, գործիքները) սույն Արձանագրությամբ սահմանված բնական մենաշնորհի կարգավորման ընդհանուր սկզբունքների ու կանոնների հիման վրա:

5. Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորումն իրականացնելիս կիրառվում են կարգավորման հետևյալ տեսակները (ձևերը, մեթոդները, միջոցները, գործիքները)`

1) սակագնային (գնային) կարգավորում,

2) սույն Համաձայնագրով սահմանված կարգավորման տեսակներ,

3) անդամ պետությունների օրենսդրությամբ սահմանված կարգավորման այլ տեսակներ:

6. Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագնային (գնային) կարգավորումը` ներառյալ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններում ընդգրկվելու (դրանց միանալու) արժեքի սահմանումը, կարող է իրականացվել հետևյալ կերպ`

1) ազգային մարմնի կողմից բնական մենաշնորհի սուբյեկտների համար կարգավորվող ծառայությունների սակագների (գների), այդ թվում` ազգային մարմնի կողմից հաստատված մեթոդաբանության (բանաձևի) և դրա կիրառման կանոնների հիման վրա դրանց առավելագույն մակարդակների սահմանման (հաստատման), ինչպես նաև բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սահմանված սակագների (գների) կիրառման նկատմամբ համապատասխան հսկողության միջոցով.

2) ազգային մարմնի կողմից մեթոդաբանության և դրա կիրառման կանոնների սահմանման (հաստատման) միջոցով, որոնց համաձայն, բնական մենաշնորհի սուբյեկտը սահմանում և կիրառում է սակագներ (գներ), ինչպես նաև բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից սակագների (գների) սահմանման ու կիրառման նկատմամբ ազգային մարմնի կողմից իրականացվող հսկողության միջոցով:

7. Սակագնային (գնային) կարգավորում իրականացնելիս անդամ պետությունների ազգային մարմիններն իրավունք ունեն կիրառելու նաև սակագնային (գնային) կարգավորման հետևյալ մեթոդները կամ դրանց համակցությունները` անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան`

1) տնտեսապես հիմնավորված ծախսերի մեթոդը,

2) ինդեքսավորման մեթոդը,

3) ներդրումային կապիտալի եկամտաբերության մեթոդը,

4) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության մեթոդը:

8. Սակագները (գները) կարգավորելիս հաշվի են առնվում՝

1) բնական մենաշնորհի սուբյեկտներին կարգավորվող գործունեության իրականացման հետ կապված ծախսերի տնտեսապես հիմնավորված փոխհատուցումը,

2) տնտեսապես հիմնավորված շահույթի ստացումը,

3) բնական մենաշնորհի սուբյեկտներին ծախսերի կրճատման խրախուսումը,

4) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագների (գների) ձևավորումը՝ հաշվի առնելով մատուցվող ծառայությունների հուսալիությունն ու որակը:

9. Սակագները (գները) սահմանելիս կարող են հաշվի առնվել՝

1) անդամ պետությունների տարածքներում բնական մենաշնորհի գործունեության առանձնահատկությունները, այդ թվում՝ տեխնիկական պահանջների և կանոնակարգերի առանձնահատկությունները,

2) պետական լրավճարները և պետական օժանդակության այլ միջոցներ,

3) շուկայական պայմանները, այդ թվում՝ գների մակարդակը շուկայի չկարգավորվող հատվածներում,

4) տարածքների զարգացման ծրագրերը,

5) պետական հարկային, բյուջետային, ներդրումային, էկոլոգիական ու սոցիալական քաղաքականությունը,

6) էներգաարդյունավետությանն ուղղված միջոցառումներն ու էկոլոգիական ասպեկտները:

10. Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագները (գները) կարգավորելիս հաշվի է առնվում այն փաստը, որ բնական մենաշնորհի սուբյեկտի ծախսերի ձևավորման ժամանակ տեղի է ունենում ծախսերի, այդ թվում՝ ներդրումների, ինչպես նաև եկամուտների, գործողության մեջ դրված ակտիվների առանձին հաշվառում՝ ըստ բնական մենաշնորհի սուբյեկտների կարգավորվող ծառայությունների տեսակների:

11. Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագների (գների) կարգավորումը կարող է իրականացվել կարգավորման երկարաժամկետ պարամետրերի հիման վրա, որոնց կարող են առնչվել կարգավորվող ծառայությունների հուսալիության ու որակի մակարդակը, համապատասխան ծառայությունների մատակարարման հետ կապված ծախսերի փոփոխման դինամիկան, եկամտաբերության նորման, ներդրումային կապիտալի վերադարձի ժամկետները և այլ պարամետրեր:

Բնական մենաշնորհի սուբյեկտի ծառայությունների սակագների (գների) կարգավորման նպատակով կարող են կիրառվել նաև կարգավորման երկարաժամկետ պարամետրեր, որոնք ստացվում են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության արդյունավետության համեմատական վերլուծության մեթոդի կիրառմամբ:

12. Սույն Արձանագրության 4–11-րդ կետերի կիրառման առանձնահատկությունները բնական մենաշնորհի որոշակի ոլորտներում կարող են սահմանվել Պայմանագրի XX և XXI բաժիններում:

IV. Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիությունն ապահովելու կանոնները

13. Անդամ պետություններն իրենց օրենսդրություններում սահմանում են կարգավորման կանոններ, որոնցով կապահովվի բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին՝ սույն Արձանագրության 2-րդ կետով սահմանված հասանելիությունը:

Անդամ պետությունների ազգային մարմիններն ապահովում են բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին սպառողների հասանելիության կանոնների և դրանցում ընդգրկվելու (դրանց միանալու, դրանցից օգտվելու) պայմանների պահպանման նկատմամբ հսկողությունը:

14. Բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին սպառողների հասանելիության ապահովման կանոնները ներառում են՝

1) պայմանագրերի էական պայմանները, ինչպես նաև դրանց կնքման ու կատարման կարգը.

2) տեխնիկական հնարավորությունների առկայության սահմանման կարգը.

3) բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից մատուցվող ծառայությունների, դրանց արժեքների, հասանելիության, իրականացման հնարավոր ծավալների, այդպիսի ծառայությունների մատուցման տեխնիկական ու տեխնոլոգիական հնարավորությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման կարգը.

4) թափանցիկ տեղեկություններ ստանալու պայմանները, որոնց շնորհիվ հնարավոր է շահագրգիռ անձանց համար ապահովել բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների շրջանառության և (կամ) դրանց հասանելիության պայմանները համադրելու հնարավորություն.

5) առևտրային գաղտնիք չհանդիսացող տեղեկությունների ցանկը.

6) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության հարցերի առնչությամբ բողոքների, հայտերի և վեճերի կարգավորման կարգը:

15. Անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտներին թույլատրվում է կիրառել իրենց ծառայություններին անդամ պետությունների սպառողների հասանելիության դիֆերենցիալ պայմաններ (հաշվի առնելով Պայմանագրի XX և XXI բաժիններում սահմանված բնական մենաշնորհի յուրաքանչյուր առանձին ոլորտի առանձնահատկությունները), եթե այդպիսի պայմանները չեն կիրառվում ըստ ցանկացած անդամ պետության սպառողների պատկանելիության սկզբունքի՝ յուրաքանչյուր անդամ պետության օրենսդրությունը պահպանելու պայմանով:

16. Չհակասելով սույն Արձանագրության 15-րդ կետի դրույթներին՝ անդամ պետությունների օրենսդրություններում չպետք է լինեն այնպիսի նորմեր, որոնցով անդամ պետությունների սպառողների նկատմամբ սահմանվում են բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության դիֆերենցիալ պայմաններ՝ ելնելով անդամ պետություններից ցանկացած պետության՝ սպառողների պատկանելիությունից:

17. Սույն Արձանագրության 13–16-րդ կետերի կիրառման առանձնահատկությունները բնական մենաշնորհի որոշակի ոլորտներում, այդ թվում՝ տարանցման հարցերը, սահմանվում են Պայմանագրի XX և XXI բաժիններում:

V. Անդամ պետությունների ազգային մարմինները

18. Անդամ պետություններում գործում են անդամ պետությունների ազգային մարմիններ, որոնք օժտված են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորում և (կամ) հսկողություն իրականացնելու լիազորություններով՝ անդամ պետությունների օրենսդրության համաձայն:

Անդամ պետությունների ազգային մարմիններն իրենց գործունեությունն իրականացնում են անդամ պետությունների օրենսդրության, Պայմանագրի, ինչպես նաև անդամ պետությունների այլ միջազգային պայմանագրերի համաձայն:

19. Անդամ պետությունների ազգային մարմինների գործառույթներն են՝

1) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սակագնային (գնային) կարգավորումը,

2) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության կարգավորումը, այդ թվում՝ բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններում ընդգրկվելու (դրանց միանալու) համար վճարներ (գներ, սակագներ, գանձումներ) սահմանելն անդամ պետությունների ազգային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում,

3) բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների սպառողների շահերի պաշտպանությունը,

4) կարգավորվող սակագների (գների) սահմանման ու կիրառման, ինչպես նաև բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայություններին հասանելիության հարցերի առնչությամբ բողոքների, հայտերի և վեճերի քննարկումը,

5) բնական մենաշնորհի սուբյեկտների ներդրումային ծրագրերի քննարկումը, հաստատումը կամ համաձայնեցումը և դրանց իրականացման նկատմամբ հսկողությունը,

6) տեղեկությունները որպես առևտրային գաղտնիք դիտարկելու առնչությամբ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված սահմանափակումների պահպանման ապահովումը բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից,

7) բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելը, այդ թվում՝ նաև ստուգումների այլ ձևեր (մոնիթորինգ, վերլուծություն, փորձաքննություն) անցկացնելով,

8) անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

VI. Հանձնաժողովի իրավասությունները

20. Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ լիազորությունները՝

1) որոշում է կայացնում անդամ պետություններում բնական մենաշնորհի ոլորտների ընդլայնման վերաբերյալ, եթե անդամ պետությունը Հանձնաժողովին համապատասխան կերպով դիմելուց հետո մտադիր է բնական մենաշնորհի ոլորտին դասել բնական մենաշնորհի այլ ոլորտ, որը նշված չէ սույն Արձանագրության 1-ին և 2-րդ հավելվածներում.

2) վերլուծում ու առաջարկում է բնական մենաշնորհի ոլորտներին առնչվող՝ ազգային մարմինների որոշումների համակարգման, մշակման և իրականացման եղանակներ.

3) անդամ պետություններում անցկացնում է բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման համակարգի և փորձի համեմատական վերլուծություն՝ ամենամյա համապատասխան զեկույցներ ու հաշվետվություններ մշակելով.

4) նպաստում է էկոլոգիական ասպեկտների և էներգաարդյունավետության առնչությամբ բնական մենաշնորհի ոլորտներում կարգավորման ներդաշնակեցմանը.

5) Բարձրագույն խորհրդի քննարկմանն է ներկայացնում անդամ պետությունների ազգային մարմինների հետ համաձայնեցված, սույն կետի 3-4-րդ ենթակետերում նշված՝ տարվող աշխատանքի արդյունքները, ինչպես նաև բնական մենաշնորհի ոլորտում անդամ պետությունների՝ մոտարկման ենթակա նորմատիվ իրավական ակտերի սահմանման առնչությամբ և տվյալ ոլորտում օրենսդրության ներդաշնակեցման համապատասխան միջոցների իրականացման հաջորդականության սահմանման առնչությամբ անդամ պետությունների հետ համաձայնեցված առաջարկությունները.

6) հսկողություն է իրականացնում Պայմանագրի XIX բաժնի կիրառման նկատմամբ:

Հավելված 1

«Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության

Անդամ պետությունների բնական մենաշնորհի ոլորտները

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
1.	Նավթի և նավթամթերքի տրանսպորտային փոխադրումը մայրուղային խողովակաշարերով	Նավթի և (կամ) նավթամթերքի՝ մայրուղային խողովակաշարերով տրանսպորտային փոխադրման ծառայություններ	Նավթի և նավթամթերքի փոխադրումը մայրուղային խողովակաշարերով
2.	Էլեկտրաէներգիայի փոխանցում և բաշխում	Էլեկտրաէներգիայի փոխանցման և (կամ) բաշխման ծառայություններ	Էլեկտրաէներգիայի փոխանցման ծառայություններ
3.		Էլեկտրաէներգիայի ցանց բացթողման և սպառման տեխնիկական կարգավարման (դիսպետչերացման) ծառայություններ, Էլեկտրաէներգիայի արտադրության և սպառման միջև հավասարակշռության ապահովման ծառայություններ,	Էլեկտրաէներգետիկայի ոլորտում օպերատիվ-կարգավարական (դիսպետչերական) կառավարման ծառայություններ

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
		բեռնվածքը կրելու էլեկտրական հզորության պատրաստականության ապահովման ծառայություններ (2016 թվականի հունվարի 1-ից)	
4.	Ընդհանուր օգտագործման տրանսպորտի շարժը, գնացքների շարժի կառավարումը, երկաթուղային փոխադրումներն ապահովող երկաթուղային տրանսպորտի հաղորդակցությունների կողմից մատուցվող ծառայություններ	Մայրուղային երկաթուղային ցանցերի ծառայություններ	Երկաթուղային փոխադրումներ

Հավելված 2
«Բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կարգավորման միասնական սկզբունքների և կանոնների մասին» արձանագրության

Անդամ պետությունների բնական մենաշնորհի ոլորտները

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
1.	Գազի փոխադրումը մայրուղային և բաշխման խողովակաշարերով	Միացնող մայրուղային գազատարներով և (կամ) գազաբաշխման համակարգերով ապրանքային գազի պահպանման, փոխադրման, խմբային ամբարային կայանքների շահագործման, ինչպես նաև միացնող գազատարներով հում գազի փոխադրման ծառայություններ	Գազի փոխադրումը խողովակաշարերով
2.	Տրանսպորտային տերմինալների, օդանավակայանների ծառայություններ, օդանավագնացային ծառայություններ	Օդանավագնացության ծառայություններ, նավահանգիստների, օդանավակայանների ծառայություններ	Տրանսպորտային տերմինալներում, նավահանգիստներում և օդանավակայաններում մատուցվող ծառայություններ
3.	Ընդհանուր օգտագործման էլեկտրոնային և փոստային կապի ծառայությունները	Հեռահաղորդակցության ծառայություններ տեխնոլոգիական անհնարինության կամ տվյալ տեսակների	Հանրությանը մատչելի էլեկտրոնային ու փոստային կապի ծառայություններ

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
		<p>ծառայությունները տրամադրելը տնտեսապես ոչ նպատակահարմար լինելու պատճառով կապի մրցակցային օպերատորի բացակայության դեպքում՝ բացառությամբ հեռահաղորդակցության համընդհանուր ծառայությունների,</p> <p>գույքային վարձակալման (վարձակալության) տրամադրման կամ կաբելային կոյուղու և ընդհանուր օգտագործման հեռահաղորդակցության ցանցին հեռահաղորդակցության ցանցերը միացնելու հետ տեխնոլոգիապես կապված այլ հիմնական միջոցների օգտագործման ծառայություններ,</p> <p>փոստային կապի՝ հանրությանը մատչելի ծառայություններ</p>	
4.	Ջերմային էներգիայի փոխանցում և բաշխում	Ջերմային էներգիայի արտադրության, փոխանցման, բաշխման և (կամ) մատակարարման ծառայություններ	Ջերմային էներգիայի փոխանցման ծառայություններ
5.	Կենտրոնացված ջրամատակարարում և ջրահեռացում	Ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման ծառայություններ	Ջրամատակարարում և ջրահեռացում՝ կենտրոնացված

Հ/ա թիվ	Բելառուսի Հանրապետություն	Ղազախստանի Հանրապետություն	Ռուսաստանի Դաշնություն
			համակարգի, կոմունալ ենթակառուցվածքի համակարգերի օգտագործմամբ
6.			Ներքին ջրային ուղիների ենթակառուցվածքի օգտագործման ծառայություններ
7.		Կոնցեսիոն պայմանագրերի հիման վրա երկաթուղային տրանսպորտի օբյեկտներով երկաթուղային ուղիների ծառայություններ	
8.		Մերձատար ուղիների ծառայություններ	
9.			Հյուսիսային ծովային ուղու ջրատարածությունում սառցահատի միջոցով նավերի անցկացում
